ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու փաղանդաշատ ու արժանաւոր զաւակիդ:

Մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում ստեղծագործական Ձեր գործունէութեանը եւ տարիների բեղմնաւոր վաստակին: Տակաւին պատանի հասակում հազարաւոր հայորդեաց ու հարազատների հետ գալով Մայր Հայրենիք՝ երաժշտական կրթութիւն ստացաք՝ աստուածատուր Ձեր շնորհները զարգացնելով Ռոմանոս Մելիքեանի անուան ուսումնարանում եւ Երեւանի Կոնսերուատորիայում: Ստեղծագործական ուղին առաջնորդեց Ձեզ մեծ արուեստի ճանապարհ: Արուեստի այլ գործիչների հետ սկիզբ դրեցիք Հայաստանի մշակութային նոր զարթոնքին՝ կերտելով դասական երաժշտութեան անզուգական ստեղծագործութիւններ, որոնց մէջ ներդաշնակօրէն միաձուլուած են ազգայինն ու համաշխարհայինը: Ճշմարտապէս արժեւորելով հայ մեծանուն երաժիշտների փորձառութիւնն ու նուաճումները երաժշտութեան ասպարեզում՝ հետեւել էք մանաւանդ Մեծն Կոմիտասի երաժշտական աւանդներին եւ ձօն էք հնչեցրել նրա անմահ եւ սուրբ յիշատակին: Մեզ համար առանձնակի ուրախութիւն է հաստատել, որ արդիւնաշատ Ձեր կեանքի ընթացքում յատուկ ուշադրութիւն էք դարձրել հոգեւոր թեմային նուիրուած գործերին, որոնցից այսօր կուզէինք յիշել յատկապէս Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» խորագրով աղօթքների հիման վրայ գրուած նոյնանուն երաժշտական ստեղծագործութիւնը: Ձեր անունն ու երաժշտութիւնը հանրաճանաչ են արուեստասէր լայն շրջանակներում եւ սիրելի ու գնահատելի՝ այլ ժողովուրդների զաւակների կողմից:

Երկար տարիների բազմարդիւն ուսուցչագործութեամբ ստեղծագործական անսպառելի կորով ու եռանդ էք ներդրել նաեւ երաժիշտների նոր սերնդի պատրաստման շնորհակալ գործում՝ դասաւանդելով Կոնսերուատորիայում:

Մեծարգոյ Տիար Մանսուրեան, հայ երաժշտութեան եւ արուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով առ Աստուած՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի արեւառատ երկար օրեր: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր եռանդ ու ստեղծագործական աւիւն, որպէսզի շարունակէք բոլորանուէր Ձեր ծառայութիւնը մատուցել արուեստին, Հայրենիքին ու ժողովրդին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 226